

# Խալիներ

Անվերջ երկար միջանցքում փռված են  $N$  հատ խալիներ: Միջանցքը բաժանված է հավասարաչափ մասերի, որոնք համարակալված են ամբողջ թվերով: Ամեն մասի վրա դրված է մեկ հատ սալիկ:  $i$ -րդ խալին ծածկում է  $l[i]$ -ից  $r[i]$  համարները ունեցող սալիկները (ներառյալ  $l[i]$  և  $r[i]$  համարները ունեցող սալիկները): Նկատենք, որ մի քանի խալի կարող են ծածկել միևյուրև սալիկը: Ձեր խնդիրն է գտնել խալիների մքսիմալ քանակը, որոնք ծածկում են գոնե մեկ ընդհանուր սալիկ:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են խալիների  $N$  ( $1 \leq N \leq 1000\ 000$ ) քանակը: Հաջորդ  $N$  տողերից յուրաքանչյուրում տրված են երկուական թվեր՝ հերթական խալու ծածկած սալիկների հատվածը նկարագրող  $l[i]$  և  $r[i]$  թվերը ( $1 \leq l[i] \leq r[i] \leq 10^9$ ):

## Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ խալիների մքսիմալ քանակը, որոնք ծածկում են գոնե մեկ ընդհանուր սալիկ:

## Օրինակներ

### Մուտք Ելք

```
4
1 2
2 3    3
3 3
3 4
```

## Գնահատում

Թեստերի 25 տոկոսում  $N \leq 1000$  և  $r[i] \leq 1000$ : Թեստերի մեկ այլ 50 տոկոսում  $r[i] \leq 1000\ 000$ :